


Կարմիր բլուր հնավայրի վերականգնման և զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծման ներդրումային առաջարկ



Ծրագրի նկարագիրը


Ծրագրի նպատակն է ցուցադրել երկրի հարուստ պատմությունը և ժառանգությունը՝ ստեղծելով ուրարտական պատմությունը, մշակույթը և կրոնը ներկայացնող զբոսաշրջային կենտրոն:

Երևանի հարավարևմտյան հատվածում՝ Հրազդան գետի ձորից հարավ, գտնվում է Կարմիր բլուր հնավայրը, որի տարածքում մ.թ.ա. VII դ. 1-ին քառորդում Ուրարտական թագավոր Ռուսա Բ-ի (685-645թթ.) օրոք հիմնադրվել է Թեյշեբաինի բերդ-ամրոցը (Կարմիր բլուր): Այն նվիրված է եղել ուրարտական հզոր աստվածներից երկրորդին՝ ռազմի և ամպրոպի աստված Թեյշեբային, որի մասին է վկայում տարածքում գտնված սեպագիր արձանագրությունը: Կարմիր բլուրի կանոնավոր պեղումները սկսվել են 1939թ.: Հնագույն բնակավայրը զբաղեցնում է ավելի քան 40 հա տարածք և բաղկացած է մ.թ.ա. XII-VII դարերի նախաուրարտական բնակավայրից, ուրարտական քաղաքից՝ իր միջնաբերդով: Շինությունն իրենից ներկայացնում է երկհարկանի մի կառույց, որը զբաղեցնում է 4 հա տարածք: Հնագիտական գտածոները հանդիսանում են ոչ միայն ազգային արժեքավոր ժառանգություն, այլ նաև՝ Միջին Ասիայի, Մերձավոր Արևելքի և Փոքր Ասիայի հնագիտական ժառանգության համար կարևոր տարր: Միջնաբերդի և նրա շուրջը տարածվող քաղաքի պեղումները մեկընդմիջտ պարզեցին ուրարտական հզոր թագավորներից մեկի՝ Ռուսա Բ-ի կողմից հիմնադրված և տնտեսական ու ռազմական մեծ վերելք ապրած Թեյշեբաինի քաղաքի պատմությունը: Ուրարտացիները նպաստեցին Կարմիր բլուրի և նրա հարակից տարածքների բարգավաճմանը՝ կառուցելով ջրամբարներ, ճանապարհներ, զարգացրին գյուղատնտեսությունը և առևտուրը:



Ումեշյան ջրանցքը, որը կառուցվել է Ռուսա Բ-ի հրամանով մ.թ.ա. VII դարում, սկիզբ էր առնում Հրազդան գետի արևելքից և շարունակվում արևմուտք՝ հասնելով մինչև Զվարթնոցի տարածք: Միջնաբերդի առաջին հարկում գտնված գինու

մառանները վկայում են զարգացած գյուղատնտեսության և գինեգործության մասին: Մեծաքանակ խաղողի սերմեր են գտնվել տարածքում, որը խոսում է ուրարտացիների կողմից խաղողի տարբեր տեսակների մշակման մասին:




Թեյշեբակի միջնաբերդ-Վարմիր բլուր(VII մ.թ.ա)



Գինու մառան N28- Վարմիր բլուր (VII մ.թ.ա)



Թեյշեբակի միջնաբերդ-Վարմիր բլուր




Գինու մառանների վերակառուցում

Ծրագրի շրջանակում հնավայրի տարածքում նախատեսվում է՝


1. Թանգարանային համալիրի հիմնում

- ցուցասրահ, նաև ժամանակավոր ցուցադրությունների սրահ,
- կոնֆերենս սրահ, որը կունենա նաև կինոսրահ,
- ֆոնդապահոց, պահեստ,
- գրադարան,
- գրասենյակ,
- ուրարտական ռազմարվեստի բաց թանգարանի կառուցում և այդ ժամանակաշրջանի զինվորներին հատուկ զենք ու զրահով, ռազմակառքերով կահավորում: Տուրի ընթացքում այցելուները հնարավորություն կունենան հետևելու նաև զինվորների բեմադրված մարտերին, հնարավորություն կստեղծվի նաև մասնակցել նետաձգության դասընթացներին,





- միջնաբերդի արտաքին լուսավորության ապահովում,
- թանգարանի հին շենքի վերակառուցում՝ տնտեսական նպատակներով օգտագործման համար,
- տեսաձայնային ինովացիոն սարքավորումներով, ինտերակտիվ քարտեզներով, այլ ցուցադրական և համակարգչային ծրագրերով հագեցվածության ապահովում:



2. Այցելուների և զբոսաշրջիկների համար սպասարկման ենթակառուցվածքների հատված՝

- սրճարան՝ փակ և ամառային, որը կհանդիսանա նաև հնագիտականի պեղումների դիտահարթակ,
- այցելուների համար գինու և զարեջրի համտեսման սրահի կառուցում, որտեղ կարասներից ուրարտական գավաթներով կմատուցվեն գինի և զարեջուր,
- հուշանվերների և զրքերի վաճառքի կրպակ, այցելուների լուսանկարահանման համար համապատասխան միջավայրի ձևավորում,
- զիֆ-լայնի ստեղծում
- արտաքին լուսավորության ապահովում,

- մուտքի հանգույցի և անցակետի կազմակերպում,
- նստարաններ,
- ավտոկայանատեղի,
- տարածքի ցանկապատում:

Հնարավոր է քննարկել նաև ճոպանուղու կառուցման անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա այցելուին վերևից դիտել ամբողջ Թեյշեֆահնի բնակավայրն իր միջնաբերդով՝ տեղակայված Հրազդան գետի կիրճի ափին, և ըմբռնել դեպի Արարատ, Արագած և Արայի լեռ բացվող գեղատեսիլ հորիզոնները:

3. Հնավայրի ցուցադրական /էքսպոզիցիոն/ հատված


- ցուցադրության /էքսկուրսիոն/ երթուղու մշակում,
- երթուղու ծրագծով անցուղիների սալահատակի, կամրջակների և հարթակների տեղադրում,
- երթուղու ծրագծով հնավայրի գտածոների ցուցադրություն /բաց կամ փակ՝ ապակեպատ/,
- ձիակառքերի համար հարթակների կառուցում՝ հնավայրի ողջ տարածքով, բլուրների լանջերով և Հրազդան գետի գեղատեսիլ կիրճի ափերով զբոսանքի կազմակերպման նպատակով, որն անմոռանալի տպավորություն կհաղորդի այցելուներին,
- տարածքի բարեկարգում և առանձին հատվածների կանաչապատում, մասնավորապես մուտքային հանգույցների և թանգարանային շենքին հարող հատվածներում,
- միջնաբերդի մուտքի հարթակի և արահետների վերակառուցում՝ տեղադրելով QR կոդերով վահանակներ, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների կիրառում՝ գիշերային ներկայացումների և տարբեր միջոցառումներ անցկացնելու նպատակով,
- նույն տարածքում ստեղծել «Վիրտուալ Ուրարտու» պատերազմական դրվագ, քանի որ քաղաքը նվիրված է ուրարտական Թեյշեֆա աստծուն, որը հենց պատերազմի աստվածն էր ուրարտական աստվածների պանթեոնում,
- լուսաձայնային լազերային էֆֆեկտների ապահովում,
- ուղեցույցների, մակետների և ցուցանմուշների տեղադրում,
- սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց համար մատչելիության ապահովում:

Նախատեսվում է նաև հնավայրի տարածքում գտնվող՝ միջնաբերդի տակով անցնող կիսակառույց կոյուղու մայրուղային անավարտ թունելի ամրակայում:




**Տեխնիկական
ցուցանիշներ**

Ընդհանուր մակերեսը կազմում է 43,5 հա տարածք:



Թանգարանային հատվածը կազմում է 1200 քմ, այցելուների և զբոսաշրջիկների համար սպասարկման ենթակառուցվածքների հատվածը՝ շուրջ 600քմ, ցանկապատի երկարությունը՝ 1200 գմ, ավտոկայանեղի՝ 720քմ:



**Ծրագրի
ժամկետներ**

Ծրագրի իրականացման ժամկետը 3 տարի է:

Ծրագրի արժեքը

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 3,5 մլն. ԱՄՆ դոլար: Հնարավոր է ծրագիրն իրականացնել նաև փուլային տարբերակով:

**Ներդրումների ձևը
և հիմնական
պայմանները**

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր համագործակցության շրջանակում:

Ներկա իրավիճակ

Ծրագրի որոշ տարրերի համար առկա է նախագիծ, իսկ լայնածավալ ծրագրի համար առկա է կառուցապատման էսքիզային նախագիծ: